

Տարեկան	1	50
Վեցամսեայ		75
Եռամսեայ		40

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ



ՇԱԽԱԹԱԹԵՐԹ

To the DICKRIS PUBLISHING COMPANY
301 East 34th St., New York City.

Entered at the Post Office at New York as
Second-Class Mail Matter.

Խմբագրութեան ղրկուած ծրար
կամ նամակ ետ չեն ղրկուիր:

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՍՈՒԳ ՈՐԴԻՆԱԿԱՆ

Անցեալ ուրբաթ Փրովիտէնսէն
հեռագիրը գուժեց արժ. Վալինսկի
Ծ. Վարդապետ Սխալեանի ցաւալի
վախճանումը: Այդ հեռագիրը ցաւի
ելեքտրականութենէ մը կուգար, որ
կայծակի մը պէս զարկու մեր սրտե-
րուն և մեզ մեծ վիշտով համակեց:
Մեր Փրովիտէնսի թղթակիցը
Վալինսկի հօր յուղարկաւորութեանը
առթիւ յղած տեղեկագրին մէջ այն-
քան գեղեցիկ ու անզեակ նկարագ-
րած է նաև անոր կեանքը, նկարագ-
րելով և գործունէութիւնը, որ մինք
հետեւեալ համառօտ տեսութիւնը ք-
նելով պիտի բաւականանանք:

«Կրակէ խառնուածք» բառը Վա-
լինսկի հօր նկարագրի պատկերելու
կ'օգտէ:

Կրակոտ էր այն գործունեայ,
աշխոյժ, կեանքով լի, զուարթ եւ
վառվառ: Կրակոտ եկեղեցացի էր,
կրակոտ կրօնասէր, կրակոտ չայրե-
նասէր, կրակոտ յեղափոխական էր:
Կրակի խառնուածքովը կը սիրէր լայ-
սը և լուսաւորութիւնը. իւր կրակովը
մաքուր սիրտ մը կը պահէր. բարի
էր, ներող էր, անաչառ էր: Կրակ
էր. չէր փակուէր տեղի մը մէջ. իր
չորս քին արծաթաբոլբոլը բնութիւնը
ունէր. իր սեպական թեմէն դուրս
ամեն տեղ կ'այցելէր՝ զանազան ա-
ռիթներով կամ նախաձեռնութիւն-
ներով ինքզինքն օգտակար ընծայե-
լու: Դեռ քանի մը օր առաջ էր որ
մէկը Քոնէքթիքեթ նահանգի Նիւ
Պրիթէյն քաղաքէն մեզի կը գրէր.
«Վալինսկի վարդապետը մեր հովիւն
կը ճանչնանք»: Նա հայրական խն-
դադատարից ինամուռութիւնով մը
ինքզինքը ամեն տեղի հովիւն ըրած
էր: Միշտ զէպի հիւսիս մագնիսին
զատեցող կողմնացոյցի ասեղին պէս՝
իր մագնիսացեալ սիրտը կը շարժէր
կ'ուղղուէր հոն ուր ազգային, կըր-
թական կամ կրօնական գործ մը,
պարտականութիւն մը կար կատա-
րելիք: Շատ նախանձախնդիր էր գը-
րասիրութիւն տարածելու, գրագա-
րան հիմնելու, լսարան կազմելու:
Կը ցանկանք որ այդ կրակովը խառ-
նուին մեր բոլոր եկեղեցականները,
նոյնպէս նաև բոլոր բողոքական քա-
րողիչները:

Մանաւանդ մեր մէջ, հասարա-
կաց գործիչները իրենց մեռնելէն
ետքը կը գնահատուին, անշնչանալէ
վերջը կը փնտռուին. նոյնպէս ալ
կարծես մահը Վալինսկի հօր կեան-
քին վը յէն սև վարագոյր մը մէկգի-
քաշեց և ահա ի տես եկաւ պայծառ
և բեղմնալի կեանք մը, որուն սր-
տաքին գոհութեամբ կը նայինք, եւ

կըսենք. Վալինսկի հայրը մեռած չէ
և չմեռնիր. նա օգտակար կեանք
մը ապրած է. նա կապրի և պիտի
ապրի իր բարի և օգտակար գործե-
րովը. կը ցաւինք սակայն, որ մեզմէ
չուտ հեռացաւ:

Դժբաղդութիւն էր որ Վալինսկի
հայր սուրբը կանոնաւոր կրթութիւն
առած չէր, սակայն իր պարունակած
կրակը երբեմն տաղանդի և հմտու-
թեան տեղ կը բռնէր. եթէ անով
երբեմն կը փնտէր, շատ անգամ ալ
օգտակար կ'ըլլար. այդպէս է կրա-
կին դերը:

Ամեն անոնք որ կուզեն հաւեր-
ժացունել արժ. Վալինսկի հօր սիրե-
լի յիշատակը, պարտին հետեւիլ ա-
նոր կեանքին, անոր ակնկալութիւն
ներուն և անոր անձնագոհ և անվար-
ոգիին:

Գ. Պ. ԶԻԹՃԵԼԻՆ

Մ Ե Ր Մ Ե Ն Կ Ո Ր Ո Ւ Ս Տ Ը

Տասներկու օրերէ ի վեր էր որ,
Տէր Վալինսկի Հայրը գլխի զօրաւոր
հիւանդութեամբ շարաշար կը տա-
ռապէր: Հազիւ ապահոված էինք ինք-
զինքնիս թէ՛ ալ ապաքինած է նա,
որովհետև կուտէր կը խմէր և կը
քնանար. վերջին այցելուք, որոնց մէջ
և Տօք. Շահպազեան, ուրխութեամբ
աւետեցին թէ՛ վաղը ոտքի վրայ պի-
տի ելլէ, սակայն աւելց, յուլիս 13
հինգշաբթի քիչեր ժամը 10 1/2 ին ա-
նակնկալ հիւանդութեան մը բուռն
յարձակում մը Հայր Սուրբի սրտէն
բռնելով, և հակառակ Տօք. Շահպազ-
եանի կարող ջանքերուն 45 րօպէտ
մէջ զայն մեզմէ խլեց:

Չորս կողմ գուժեցին Փրովիտէն-
սի հեռագրութեամբ: Եպիսկոպոսը
Ուստրըն, Հայր Մաշթոց Պօսթիէն
և Սաղ վարդապետ Նիւ Եօրքէն,
փութացին հասնիլ իրենց եղբորը, որ
ալ չկար:

Փրովիտէնսի մէջ յարմար տեղ
մը չըլլալուն, խորհեցան մամիւնը
Ուստրը տանիլ և հոն Աղգ. եկեղեց-
ոյ մէջ վայելուչ չքով մը յանձնել
հողին: Սակայն, ժողովուրդը այդ
բանը իրեն զրկանք մը համարելով,
ուզեց որ Հայր Սուրբի գերեզմանը
իր մօտ, իր աջի առջև ունենայ. ա-
սոր համար անմիջապէս կարելի ե-
ղած միջոցներու վրայ խորհուեցաւ:
Մարդիկ գացին եկեղեցի մը գտնելու
և գտան. տեղւոյս բողոքական եկե-
ղեցին ինչպէս միշտ բարեկամական
աչքով նայած էր զէպի Հայ գաղու-
թը, այս անգամ աւելի մեծ սիրով
ընդունեց մեր առաջարկը իր փառա-
ւոր եկեղեցին մեր արամաբարութեան
տակ գնելով:

Շարաթ երեկոյ երիտասարդաց
փոքրամասնութիւն մը հաւաքուած
էր ժողովարարձը ընդ նախագահու-
թեամբ Եպիսկոպոսի և ատենապե-
տութեամբ պ. Շահէն Շահէնեանի:
Սրբազանը՝ Հայր Սուրբի ցաւալի մա-
հը պատմող քանի մը սրտառուչ խօս-
քեր հազիւ կրցաւ արտասանել:

Տիւրք, շատ սիրուր էր տեսա-
րանը. ներկայից աչքերէն դառն ար-
ցունքի կաթիլներ վար կը գլորէին,
որոնք Հայր Վալինսկի մարմինը
Ուստր տարուելու առաջարկին դէմ
կը բողոքէին կողկողազին ձայնով մը
ըսելով. «Ձէ, չէ. մենք կուզենք որ
մեր Հայր Սուրբը հոս մնայ»: Ու ար-
տասուքով թրջուած ձեռքեր կերե-
րային յուղարկաւորութեան համար
հարկաւոր դրամը տալու:

Միթէ Փրովիտէնսի ժողովուրդը
թոյլ և անտարբեր կրնա՞ր գտնուիլ
այսօրինակ պարագաներու տակ. դեռ
Հայր Վալինսկի յոյժ պատուաբեր
կեանքը մեր աչքի առջև, մեր սրտե-
րու մէջ էր: Այժմ ինքիւրը Հօր և
զուգի, Հովուի և հօտի յարաբերու-
թեան մէջ էր: Ձէ յիշու և վասպու-
րականը վկայ են Փրովիտէնսի ժողո-
վուրդին որպիսի զգայուն սիրտ մը
կրելուն, նա ինչպէս կրնար իր դը-
րամը խնայել իր սիրելի հօր յիշա-
տակը յուրեքսցանել՝ որ ալ կերթար
մեզմէ:

Կրակի առաւօտ էր: Վերը ամ-
պալից երկինքը ուկիանոսի նման կա-
լեկոծէր, կորոտար և երբեմն կայծակ-
ներ կը նետէր հոս հոն. վարն ալ այս
օտար երկրին մէջ փոքրիկ գաղթա-
կանութեան մը սիրտն էր, որ կալե-
կոծէր ու փոխան կայծակի բազմար-
դիւն հօր մը անշնչացած մարմինն
էր, որ «մնաք բարով» ուլը, մեր սըր-
տերը կարնէր և կերթար զէպի
գերեզմանի լուռութիւնը, ուր իր այն-
քան կրակոտ կեանքին կայծերն ու
բողոքը պիտի ամփոփուէին:

Ժամը մէկուկէսն է. Փրովիտէն-
սի ժողովուրդը քիչ բացառութեամբ
ինչպէս շրջականներէն ալ լեցուն էին
եկեղեցին: Երբ սեւերով պատասարդե-
ր ներս կը բերէին, վո՛ւշ... վա՛խ...
օ՛Ֆ... հառաչանքները օրօրեցին ե-
կեղեցին: Դագաղակիքը շատ ծանր
քայլերով իրենց հայրենակից Հայր
Սուրբը տարին բեմին առջև, ուր կը
կենային եպիսկոպոսը և վարդապետ-
ները, որոնք վեր առնելով իրենց եղ-
բայը գրին զայն բարձր տեղ մը:

Ըստ Հայկական սովորութեան
Ս. պատարագ սկսուեցաւ վասն հան-
գուցեալ Հօր: Կոկիկ և ազգեցիկ վեր-
ջաւորութենէ յետոյ, Սրբազանը յա-
ռաջ եկաւ դամբանական խօսելու:
Յիշեց անոր ծննդավայրը, պաշտօն
վարած անդերը և հակիրճ կերպով
պատմեց անոր կենսագրութիւնը: Ա-
ւելի ծանրացաւ սակայն հանգուցեալ
Հօր Ամերիկայի կեանքին և գործե-
րուն վրայ, որոնց մասին ժողովուր-
դը կրնար վկայել: Սրբազանը ըսաւ.
«Նա ոչ նշանաւոր ուսումնական մը
և ոչ ալ բարձր կարողութիւն մը ու-
նեցող մէկն էր. սակայն, իր ունե-
ցած փորձառութիւնը և գործին ան-
կեղծօրէն փարիւրը զինքն ըրած էին
յոյժ օգտակար կղեր մը: Ազգասի-
րական և կրօնական վսեմ զգացում-
ներու տակ՝ նա օրինակելի եղած էր,
իր անկեղծութեամբ, անաչախնդ-
րութեամբ և անփառասիրութեամբ:

Նա տիպար և բարոյական ունեցող ա-
ռաջնորդ մ'էր ու գործօն կեանք մը,
որ օրը գիշերին խառնած ժողովուր-
դին բարօրութեան համար կաշխա-
տէր, մինչև որ այդ արտասովոր աշ-
խատութեան զոհ գնաց...»

Սրբազանը այս բոլորին համար
ժողովուրդին և իրկողմանէ արտասուե-
լից շնորհակալութիւն յայտնեց հանգ-
չող մարմնին:

Ժամանակը լրացած էր. Սրբա-
զանը քանի մը միթիթարական մաղ-
թանքներէ յետոյ յանձնեց Հայր Սուր-
բը իր սիրելի հօտին. կարգաւ ող-
ջուեցով դագաղը, համբուրեցին
դաւկած երեսն ու ալը... Ժողովուր-
դը արտասովոր քաղաքավարութեամբ
մը դուրս ելաւ եկեղեցիէն և սպա-
սեց, մինչև որ դագաղը կառքը
գրուեցաւ: Պաշտաման մէկ մասը
գերեզմանատունը պիտի կատարուէր,
ուր քիչ մը կարդաւուցէ վերջ, ժա-
մանակ տրուեցաւ Տէր Սաղ Հօրը,
որը իրեն յատկացուած խիստ կարճ
ժամանակին մէջ, ջանաց ազգու կեր-
պով բացատրել պաշտօնութեան
մեծութիւնը և անոր անմահութիւ-
նը, յորդորեց և խրատեց փրովիտէնս-
ցիքս, որ հաւատարիմ մնանք Տէր
Վալինսկի Հօր մեզ քարոզած ճշմար-
տութեանց:

Պաշտօնական մարմնոյն կողմէ
հրաւիրուեցան խօսելու Պատ. Կ.
Մարդուկէսեան և Պատ. Խ. Պէննէ-
եան: Առաջին խօսողը ըսաւ. «Սո-
վորաբար այսպիսի պարագայից մէջ
մարդիկ ենթակայ կը ինինս ամէն
մեռնողի համար ըսել թէ, բարի էր,
օգտակար էր, և կը մոռնան անոր
թերութիւնները. սակայն, ուղղու-
թիւնէն չի շեղելով ես պիտի ըսեմ
թէ, Տէր Վալինսկի, իբրև մարդ, իբ-
րև վարդապետ իր թերութիւնները
ունէր. ինչպէս ունի Հայրիկը, Սըր-
բազանը, տէրտէրը, ես և դուք: Սա-
կայն անոր մեծութիւնը որ իմ սրտիս
մէջը մնացած է և պիտի մնայ. էր ա-
նոր միամտութիւնը, անկեղծութիւ-
նը և անդուլ աշխատանքը բարիին
համար»: Շատ պեղծ կերպով քայտա-
րեց Հայր Վալինսկի գործած օգուտ-
ները՝ բարոյական, ազգային և կրօնա-
նական տեսակէտով:

Պատկերու ցանկ մը կարգաց
Պատ. Մարդուկէսեան ղրկուած հե-
տեւանքերէ:

1. Աղգային Հոգաբարձութիւնը,
2. Գրադարանի վարչութիւնը,
3. Պօլ-
սեցի խումբ մը,
4. Սմբակ մը,
5. Սէնթրիֆօլսի ժողովուրդը,
6. Թէրզի Սարգիս և Յակոբ Յարութիւնեանէն,
7. Պօսթօնի Հոգաբարձութեանէն,
8. Նիւ Եօրքէ Հոգ. 9. Ուստրի Հոգ. 10. Ուստրի Աւե. եկեղեցւոյ Հոգ. 11. Փրովիտէնսի հեծեանի խմբակէն. 12. Հայրենիքի խմբագրութեանէն, 13. Իրօչակեաններէ, 14. Տիար Թովմաս ձէլալեանէ: Համառօտ ուղերձներով այդ ծաղկէփունջերը գրուեցան դա-
գաղին շուրջը: Պատ. Պէննէեան, որը պաշտօնապէս եկած էր Ուստրէն իր
եկեղեցւոյ կողմէն, լաւ կերպով ջա-
նաց պարզել կեանքը, անոր նպատա-

տակը և մահը: Նայր վաղինակ կապրի, քանի որ նա միմիկարած է մէկը, հոգ տարած է ուրիշի մը. նա պիտի ապրի անոնց սրտերուն մէջ: Յետոյ յորդորեց, որ ըմբռնենք յաւելտենականի վսեմ գաղափարը: Կարգացուցան քանի մը լաւ ճառեր: Վերջին գործը հողին էր, որ այդ թանկագին մասունքը գրկեց իր ծոցին մէջ, և մենք մեր արցունքները հոն խառնելով վերադարձանք տեղերնիս: Երբ արած սըրտով մը...

1899 յուլիս 18
Փրովիտէն

ՊՕՄՊ

Կ Ա Ր Մ Ի Բ, Կ Ա Ր Մ Ի Բ

Երկնից սահանք վաղուց փակուեր, Երաշտ չորացուց Հայոց արտեր. Ա՛յս, գէթ կարմիր անձրև կախէր, Մեր կորը հողեր պըտղաբերէր:

Թօշներ է վարդ և մանիշակ, Աղբրանց արուն 1) դարձեր սիպտակ. Ա՛յս, ե՛րբ ի՞նչն ցօղ կարմրակ, Ոռոգէ մեր ծաղկանց բաժակը...

Երկարեցաւ գիշերն իսպառ, Տըխո՛ւր, ամպո՛ւտ, մութ և խաւար. Ա՛յս, ե՛րբ կարմիր արշալոյս վառ Ոսկեզօծ է երկնից կամար...

Երկարեցաւ ձմեռն և ձիւն, Մածկեց զերկիր պատանք անհուն. Ե՛րբ պարգևէ մեզ բընութիւն կարմիր Ձատիկ, կարմիր գարուն...

Բայց հ՛ա կարմրի վարդն ու կակաչ, Հովիտն հագնի գորգ նոր կանաչ. Վազեն առուք քաղցր ի կարկաչ, Արև փայլէ կարմիր ճաճանչ:

Կարմիր վարդ ու կարմիր հարսնուկ Ելեր փընտոսն հարսնեք կարմրուկ. Ե՛լ, պատանակ, քաղէ՛ ծաղիկունք, Ձօնէ՛ նոցա արեամբ ներկուկ:

Կարմիր դըրձ կուզէ Հայ մարդ. Հարսնեք, առէ՛ք մի շղարձ ու շայդ կարմիր ներկած յայտերուդ վարդ. Ընծայեցէք նըմա զըւարթ:

Ա՛ն քու դըրձդ, ու ե՛լ կանգնիր. Նըջանդ կարմիր, արիւնդ կարմիր, Կարմիր ներկէ նաև զերկիր, Անմահ անուն քեզ վաստըկիր:

Հայե՛ր, մենք շատ թափենք քըրտինք, Փոխան ոչինչ քաղենք արդիւնք. Եկէ՛ք քեզ մ՛ալ կարմիր քըրտինք, Որ մեր վաստակն օրհնէ երկինք:

Մեր պաղատանք, բողոք անդու Ձեն լըւելի բնաւ — աշխարհ մնայ խուլ. Իսկ երբ արիւն առնու հեղուլ, Ձայնը հասնի աստղերու բոյլ:

Հայ աշխարհին ժըպտի Գարուն, Թէ մենք թափենք կարմիր արիւն. Փոխան կանաչ մեր արևուն, Հայաստանը դառնայ Հայուն:

Եկէ՛ք զոճէ՛նք կարմիր 2), կանաչ 3) Եղբարց և քերց՝ որդւոց առաջ 4), Որ չուրջ լըւելի երգոց աւաչ, Հայեր խաղան կարմիր — կանաչ 5):

1) Աղբրանց արուն. վառ կարմիր գոյնով ծաղիկ մը: 2) Կարմիր, այսինքն կարճ իր արիւն ինչպէս նախորդ տան մէջ ըսուած է: 3) Կանաչ, կանաչ արև՝ ինչպէս նախորդ տան մէջ ըսուած է: 4) Առաջ՝ այստեղ կը նշանակէ համար, ի սէր, տաճկերէն ուղբունա: 5) Կարմիր —

Օ՛ն մեր կենաց նարտը թանգ Բազըր Հայրենեաց մեր նըւէր տանք. Անտի կարմիր — կանաչ — սիպտակ 6) Մասեաց գըլխուն հիւսի պըսակ:

Կարմրող 7) լինի կարմիր վարդան 8) Ապրող՝ թագուոր 9) վարդի նըման. Կարմիր ցօղն միոյն տապան, Կարմիր բմպեն միւսին սեղան:

Կարմիր կարմիր, հիւթ կենսալիր, Եռա՛, փըրփրէ՛, վառէ՛ գըրգըր. Բեզ կարօտ է Հայոց երկիր, Յօղէ՛ շիթերդ ազատածիր:

1892, Մուշ Մ. ՏԱՄԱՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Իրաւունքի» մէջ հետեւեալները կը կարդանք: Ցաւալի է որ Օրմանեան Արթին բաշայի խորհրդով որչափ կը քննի այնչափ և աւելի կառավարութիւնը անոր ուսերուն վրայ կը ծանրացնէ նորանոր պահանջներ ու ճնշումներ, առանց գործադրելու իր փոխադարձ խոստումները: Ազգային վարչական ժողովոյ որոշումները կառավարութեան մէկ օղջեղէրէն ըսելու կից նաև: Եարթ թ մը առաջ Արդարութեան նախարարութեան Պատրիարքին դրկուած պաշտօնաթուղթ մը բացարձակապէս հրամայեց որ Կրօն և Քաղաքական ժողովները իրենց պաշտօնը շարունակեն, չըջանին աւարտած լինելն առանց նկատողութեան անենելու, որովհետև կայսերական կառավարութիւնը գոհ է եղեր

կանաչ կը նշանակէ հարսնեք, հարսնեկան նարտ և հարսնիքի պար: 6) Կարմիր — կանաչ — սիպտակ հայկական հին դրօշակին գոյները կը նըկատուին: 7) Կարմրող, արիւն թափելով մեռնող: 8) Կարմիր վարդան, այսինքն անոր պէս Հայրենեաց նահատակ: 9) Թագուոր, փեսայ:

Ըսելու հարկ չկայ, որ վերագրեալ ռասնաւորը անօգուտ արիւնահեղութիւններու իր քաղաքներ կամ կորստաբեր կորստածներու «փափաք» մը չկրնար մեկնուիլ. այլ ժողովուրդին շարժումով, յեղափոխութեամբ, արեւան գնով իր կենքի իրաւունքները պահանջելու և ստանալու փառաւոր և պատմական ձգտումն է: Ժողովուրդի մը փառակցութիւնը արեւան ատեն միայն կրնայ համարուիլ իրապէս դարգացած և հասունցած, երբ այդ ժողովուրդը իր իրաւունքներու, իր ազատութեան համար զէնքով կըռուելու, արիւն թափելու ընդունակութիւնը գործով ցոյց կուտայ: Ձանց անկողով այդ երևութիւն գործնականի մէջ ստացած այս կամ այն արտայայտութեան ձևը, — գործունէութեան նպատակայարմար կամ փնտասկար կերպերը, — ինքնին այդ երևոյթը, ընդհանուր առմամբ, մեծապէս ուրախալի, պատուաբեր և յուսադարկան է, և ամենէն ազանով զբաւականն է կենքի նոր պահանջներուն իրականացմանը: Այդ երևոյթին մեր մէջ ի յայտ գալուն փափաքն է որ ներշնչած է, ինչպէս մեր գործունէութիւնը, նոյնպէս և վերագրեալ տողերը: Այս ծանօթութիւնը բոլորովին աւելորդ պիտի ըլլար, եթէ հայութեան արիւնքամ եղած մէկ միջոցին՝ չգտնուէին կարգ մը մարդիկ որ ուրիշներուն գործը, իսուքը և զիրտաւորութիւններու լաւագոյններն անգամ չարամտութեամբ մեկնել և խեղաթիւրելը իրենց բան գործըրած չըլլային:

Մանօթ. Հեղի.

այդ կրկին ժողովոց պաշտօնավարութեան: Նախարարութեան այս նոր պաշտօնագիրը Սահմանադրութեան ջնջումը կը նշանակէ. բայց Օրմանեան և Տատեան ստիպեցին ժողովականները որ այս նոր հրամանին ալ համակերպին, հետեւաբար մօտ միաներու մէջ պէտք չէ սպասել Երեսփոխանական ժողովոյ գումարման և թերևս բնաւ չի գումարուի. որովհետև Սահմանադրութեան վերաքըննութիւնը գլխաւորապէս այդ նպատակաւ էր, որ ի մօտայ միանգամ պիտի իրագործուի:

Անցեալ շաբթու Սամաթիոյ և շրջակայ թաղերու մի քանի ժողովներէն գրգռիչ յայտարարութիւններ գտնուեցան. կառավարութիւնը նախ ջանաց այնպէս ձեւացնել թէ ատոնց հեղինակները Հայ յեղափոխականներն են, բայց բարեբաղդաբար չուտ յայտնուեցաւ թէ մի քանի Հայ լրտեսներու գործ է այդ. ձեւակերպութեան համար ասոնք ձերբակալուեցան, սակայն ոստիկանութիւնը անոնց լրտես ըլլալը չը գիտնայ կեղծելով՝ նորանոր խոստովանելով և խուզարկութիւններ կընէ, իբր միակ միջոց հայերէ գրամ կորզելու:

Արդէն յայտնի է թէ Սուլթանի շքանշանները ինչ արժէք ունին. ասոր մէկ նոր պայցոյցը ահաւասիկ. Պօլսոյ թուրք լրագրաց Հայ և թուրք բոլոր գրաշարներուն և կարգի Մէծիտիյէ, և «Սէրվէթ» լրագրի երկու Հայ մեքենավարներուն իֆթիխար — շքանշանները տրուեցան:

Վերջերս Անգլ. խորհրդարանին մէջ երեսփոխանի մը կողմէ կառավարութեան հարցապնտում մը ուղղուեցաւ, հայկական խնդրի և ի մասնաւորի Մշոյ կողմերու վերջին կոտորածներու մասին. երեսփոխանը եզրակացուց, Հրուիրելով կառավարութիւնը հետեւիլ Փրանսական ու իտալական զենպանակ և հաւաքական ու աղբու երկրորդ բողոքագիր մը և ստալ:

Կ. Պօլսոյն «Տէլիթէլիկաֆ» ի կիմացնէ թէ Յարութիւն փաշա «Իրօշակ» թերթի վերջին թիւերէն միոյն մէջ իր երեք նամակներու հըրատարակուած լինելը տեսնելով ու սուլթանին խոստումներուն վրայ իր ալ տուած խոստմանց ցարդ չի գործադրուելուն պատճառաւ Պատն և Քաղաքական ժողովոց ատենապետութեան իսպառ հրաժարած է. ուրտաւելով այլևս հայկական հարցով երբէք չզբաղուի ու չմիջամտել:

«Սթանաւարտ» ի Կ. Պօլսոյ թըղթակցը կը գրէ թէ՛ Չարը Հայոց Հա Հէյ ղրկած պատուիրակութեան կողմէ եղած զիմուններէն խիստ ըզգածուելով՝ դեպքան Ձինովիէվի պաշտօն յանձնած է Բեթեքպուրիէ Պօլսոյ վերադարձին Սուլթանին բողոքել Հայկական գաւառաց ու թրքահայոց կրած անվերջանալի տառապանաց դէմ: Սուլթանը ասոր ի պատասխան՝ խոստացեր է յանցաւոր թուրքերը ձերբակալել ու խստիւ պատժել:

Լօստօն «Թայմզ» մէջ Հայկական շարքէ մը աւելի ստիպալի հեռագիր մը կայ վասպուրականի և այլ կողմերէն Ռուսաստան փախուցող Հայերու մասին: Ծատ ուրախ էին շատ Ռուս կառավարութիւնը Դրանց արտգործար զիմուններ ընկողմ՝ վերջապէս

իսուք առաւ որ յիշեալ փախուսականները իրենց տեղերը վերադառնան և քրտերէն գրաւուած կալուածներուն տիրանան: Թիւրք կառավարութիւնը որ օձիքը Հայերուն ձեռքէն ազատելուն ճարը միշտ կը մտածէ, միջոց մը կուզէր գտնել որ երկրէն պահած այդ Հայերը կրկին իրենց տեղերը չդառնան. և, ո՞ր դիւային միտքը հետեւեալ շար խորհուրդը յըզացած է. որ կրէաէն դուրս ելլող մահմտականները Հայաստան դըրկուին և Ռուսաստան ապաստանող Հայերն ալ կրէաէ ճամբուին: Այս ճիւղաղային գիւտին վրայ Թիւրք կառավարութիւնը խնդապատառ եղած է և խնդիրը յանձնել է Ռուսոյ դեռպան Զօրավիէֆին խորհրդածութեանը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուլիս 17, Թրոյ.

Տէր, Ի նպատակ վանի սովեց Հանգանակեալ դրամի գումարէն ապագիկ մնացած 4 տարբէն մէկը՝ անձ մը, չենք գիտեր ինչ պատճառաւ, խոստացած և վճարած չէ տակաւն Այսպիսի անձինք որ լոկ փառքի ու պարծանաց համար ժողովուրդի մէջ ինքզինքնին ազգասէր ցուցնելով այլևայլ խոստումներ կընեն՝ պէտք է որ կատարեն. ապա թէ ոչ աւելի լաւ կըլլայ որ չխոստանան: Այս անձ երբորդ անգամն է որ կը խոստանայ և չվճարեր: Կը խնդրենք որ չորսորդ խոստում մը չփորձէ: Տեղւոյս Ազգ. Որբանամ ընկերութիւնն անցեալ աւուր ընդհանուր ժողովին մէջ որոշեց երկու որբ պահել, մին՝ Ձմիւռնիա և միւսն՝ Տիգրանակերտ: ՍՍՆԻՄ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ԳՐԱՍԷՐ

Պօսթօն, յուլիս 17.

Պ. Գրատէր, Ձեր ակնմընեքը ուրիշին փոխ տուած էք եղեր եւր Լօրէնս ժողովի եկած էիք: Ես ըսի՝ «Այդպիսինք (ակնարկելով Չօպանեան և ամեն անոնք որ գիտակցօրէն կը խեղաթուրեն) նայնիսկ Սուլթանէն ԿՐՈՆԱՆ կաշատուիլ»: «Կրնան կաշատուիլ» և արդէն «կաշատուած» բառերու տարբերութիւնը եթէ չէք գիտեր՝ սովորեցէք: Ա. Ս. Լեւոնեան

ՈՐՈՐԳԻՏ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԸ

Որբերդի Դատեմ գիւղէն Հաճի Պէկօ անուն թուրք որ թէ շարքերուն տեսնել և թէ շարքերէն վերջը տեղւոյն ամենաստակալ արհաւիրքը եղած է, Հայերու բողոքին վրայ Մէզգրէի կառավարութիւնը կը ձերբակալէ ու կը բանտարկէ. սակայն, ինչպէս սովորական է, կառավարութիւնը անոր վրայով եղած ամբաստանութիւնները հաստատող ապացոյցներ չգտներ. հետեւաբար քանի մը օր զայն բանտը պահելէն ետք՝ կ'արձակէ որ իրեն գիւղը երթայ: Հաճի Պէկօն գիւղը երթալուն պէս Հայերուն գլխաւորները կը կանչէ և անոնցմէ կը պահանջէ որ անոնք իւր ամեն հրամանները կատարելու և իրեն դէմ որ և է արուեսնջ չընելու պայմանագրութիւն մը ստորագրեն, որպէս զի ասոր փոխարէն ինքն ալ զանոնք պաշտպանէ:

Հայերը խորագրութիւնով մը այդ առաջարկը կընդունին՝ խնդրելով որ ինքը՝ Հաճի Պէկօն ալ իրենց գրութիւն մը տայ թէ՛ մինչև այդ թուականը ամեն ինչ շարք ու զրկանք որ

Հայուհեաց ընկերութեան նման գործօն ծրագիր մը մշակեն, պաշտօններու, մրցումի և ձևակերպութիւններու դամբանական կարգան և գործ ընելու ընթացքի մը հետեւին, որ ատեն մրցումը գործ կատարելու և ոչ թէ պաշտօն առնելու վրայ կայանալով՝ ալ պարագայ խճճանքներու և ոտնձգութիւններու առիթ չմնար: Ով որ կարող է թող ինքզինքը աւելի օգտակար ընծայէ գործ ընելով. թող մեր տիկիներն ալ տուները այցելելու, թանգարանին օժանդակելու, լսարան հիմնելու, բանաստեղծութիւններ ընելու, ազնուացունող ազդեցութիւն տարածելու աշխատին: Թող նիւ Երոբի Հայ տիկիները իրենց բարձր գարգացումովը աւելի բարձր և գործօն դերի մը մէջ մտնեն և այդպիսով օրինակ հանդիսանան բոլոր Ամերիկայի Հայ տիկիներուն նոյն իսկ Ուստրի Հայուհեաց նախանձեւի ընկերութեան:

Այլ առթիւ կրկին կը խօսինք այս նիւթին վրայ:

Գ. Պ. Չիթճեան

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՍՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ կացութիւնը այնքան ծանրացած է որ վիճենայէն Տէյլի թէ՛ Լէյկաֆին հեռագրուածին Տէյլի թէ՛ Լէյկաֆին հեռագրուածին կը պատճառէ քաղաքական շրջանակներուն: Կ. Պոլսէն կը գրեն նոյն թերթին «Անիշխանական Վիճակ Հայաստանի Մէջ» վերնագրով:

Վանի և Բաղէշի շուրջը երկրին կացութիւնը օր օրի վատթարանալու վրայ է, որովհետև Համիտիէ քերտի հեծեալազորքը, Հիւսէյին փաշան հրամանատարութեան տակ, կատարելապէս տէր եղած է ամբողջ երկրին: Թուրք Պաշտօնականները, թէ քաղաքական և թէ զինուորական, ամեն ազդեցութիւն կորսնցուցած են: Ոչ միայն Հայերը, այլ քերտերուն հետ կապ չունեցող բոլոր բնակիչները կը տառապին, նոյն իսկ Թուրք զօրքերը այդ վիճակին մէջ են. ըստ որում Հիւսէյին փաշա ձեռք անցուցած է բոլոր արմատիքը և ուզած գնովը կը ծախէ, ու զօրքերը հետևաբար գրեթէ անօթի են: Տարակոյս չկայ թէ յեղափոխականները ներկայ ժամը Հայաստանը կը նկատեն խռովութեան մը համար, որպէս զի խաղաղութեան համաժողովին ուշադրութիւնը հրաւիրեն Թուրքիոյ կացութեան վրայ: և ասիկայ ինքնին կը բաւէ պատրաստ ըլլալ ամեն բանի որ կրնայ տեղի ունենալ Թուրքիոյ մէջ:

ՄՈՒՇԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ

Վանի Անգլիական և Ռուսական հիւպատոսները անմիջապէս Մուշ գնացած են հոն կատարուած շարժին պարագաները քննելու:

Այս առթիւ Անգլիոյ խորհրդարանին մէջ հարցապնդում մը եղաւ կառավարութեան թէ Անգլիա պիտի հետևի՞ Յրանսայի և Ռուսիոյ որոնք ծանուցագրեր դրկեր են Դրան: Արտաքին Գործոց խորհրդարանը պատասխանեց որ, եթէ դէպքերը ըստուգուին, կառավարութիւնը ինքն ալ միւս պետութիւններուն պիտի գործակցի:

Կ. Պոլսի կրկին կը յուզուի Սահմանադրութեան վերաբնեւութեան խնդիրը, իսկ ժողովին պաշտօնավարութեան երկամեայ շրջանին լրանալուն առթիւ:

ԱՊՏԱԿ ԱՆՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐԻՆ

Կ. Պոլսոյ ազգ. մարմին մը Հայտարարութիւն յիշատակագիր մը ղրկած է ժամանակին Լա Հէյի համաժողովին, նոյն մարմինը որ ազգին կողմէն խօսելու իրաւունքն ունի, հետեւեալ բողոքագիրը հասուցեր է Համաժողովի նախագահին:—

«Կը տեղեկանանք թէ Հայոց պատրիարքը, Տ. Օրմանեան, դաւաճան իր ազգին, հեռագրած է Լա Հէյի Համաժողովին թէ՛ անհատներ կրնան Համաժողովին պատգամաւարներուն յիշատակագիր ներկայացունել Հայկական խնդրին վրայ, բայց այդ անհատները ու է տիտղոս չունին ազգը ներկայացնելու, և ոչ իրաւասութիւն ունին ոչ ալ պաշտօն յանուն ազգին խօսելու, հետեւաբար պէտք չէ անոնց լսել:»

«Ուրեմն երբ մենք քաղաքակիրթ աշխարհին ասեանք կը հանենք մեր ժողովուրդին մարտիրոսութիւնը և Սուլթան Համիտի ահուկ ոճիրները, երբ մենք կը ինքեցունք երբեք հարիւր հազար Հայու ջարդը խաղաղութեան ժամանակին, երբ կը ծանօթացնենք ամբողջ ցեղի մը մեթոտիկ ընդմուտը նորանոր կտորածներով՝ որոնք գրեթէ հանապազօրեայ են և պաշտօնապէս կազմակերպուած սովի միջոցաւ. մենք պաշտօն չունինք երբ յանուն ճշեալ ազգին խօսելու:»

«Մենք սակայն պիտի խօսինք և մեր պետերուն նման անխիղճ դաւաճանակիցներ չպիտի ըլլանք թագապետ Մարգարայանին, ծածկելով աշխարհի աչքէն անոր արիւնզանդ ոճրագործութիւններուն քստմեկի ցանկը:»

«Պէտք է վերջապէս գիտցուի թէ մերիններուն օր մը խմբովին և օր մը առանձին առանձին կտորուցելուն վկաներ ըլլալէ յոգնած ենք: Չէնք ընկէցութեան Համաժողովը եթէ յարմար չի դատեր զինամիտք ընել ընտրելի վայրագ գաղանք, յուսահատութիւնը կրնայ մեզ վրէժխնդրութեան մղել: Եթէ ողբերգական դէպքեր տեղի ունենալով Արեւելք, վտանգեն տիեզերական խաղաղութիւնը, պատասխանատուութիւնը պիտի չծանրանայ մեր վրայ, այլ անոնց վրայ որոնք իրենց պղերգութեամբը Սուլթան Համիտին թոյլ տուին նահատակել ի բնէ խաղաղասէր ժողովուրդը:»

Յուլիոս Երև. Կ. պոլսէն Լոնտոն թայմսին կը հեռագրուի:—

Հայերուն իրենց հայրենիքը վերադառնալու խնդրոյն նկատմամբ Սուլթանին կողմանէ Չարին եղած դիմումներուն վրայ, Ռուսական դեսպանը մեղմացած կերեալ:

Յուլիոս 3.— Հոս այժմ ամեն բան հանդարտ է, բայց անկէ որ Հայերուն վրայ բազմաթիւ ձեռքարկութիւններ կը կատարուին այն պատրուակաւ թէ Հայերը յեղափոխութիւն պիտի յարուցանեն:

Յուլիոս 12.— Հայոց Պատրիարքը երէկ իրատէ մը ընդունեց որ կը պատուիրէ Գում Գարուի ժողովին բոլոր պահանջներուն գոհացում տալ, և կ'արտօնէ որ Սիւրի կաթողիկոսի ընտրութիւնը կատարուի:

—Կ'ըսուի թէ Սօքրատոսի առաջնորդութեան ընտրելի Այվազեան եպիսկոպոսի ընտրութիւնը յետաձգուել է և անոր տեղ ընտրելի նշանակել են Երեցեան և Դուրեան նորընծայ եպիսկոպոսները:

ԻՇԽԱՆ ԲԵՀՊՈՒՏԵԱՆ

Ռուսահայ ազնուական իշխան կոստանդին Բեհպուտեանցի բանտարկութեան լուրը հաստատուած է: Այդ բարձրաստիճան հայ պաշտօնատարը ամբաստանուած կովկասու կառավարիչ Կալիցին իշխանէն, որովհետև այդ հայազգի իշխանը նախարարներուն քով իր ունեցած վստահելի գիրքին շնորհիւ քանիցս ի դերեւ հանած էր կովկասի թէ արդի և թէ նախորդ կուսակալին ծայրայեղ անարարկները, որոնք Ռուսահայոց իրաւունքները կը սահմանափակէին:

Իշխան Բեհպուտեանցի դէմ ամբաստանութիւնն սա էր կովկասահայոց վերաբերեալ Կալիցին տեղեկագիրը առաջնեայի մը ձեռքով ընդօրինակել տալով «Թայմս» թերթակցին հաղորդած և օրինակ մ' ալ իր քով պահած է:

Իշխան Բեհպուտեանց կէս գիշերէն վերջ իր տանը մէջ կը ձերբակալուի ոստիկանութեան ծայտեալ գործակալներէ, բնակարանը կը խուզարկուի՝ բայց ամբաստանութիւնը հաստատող ու է թուղթ չի գտնուել:

Մտերու թիֆլիս տեղի ունեցաւ տեղական 1—2 կարգի վաճառականներու ընդհանուր ժողով, այնան թիֆլիզի մէջ ընդունելով առեւտրական դպրոցին հոգաբարձական խորհուրդի համար նախագահ և հինգ անդամներ ընտրելու: Ընտրութիւնը գաղտնի ըլլալու հարկութեամբ էր: Թէ նախագահը և թէ անդամները հայեր են, բացի մէկէն որ վրացի է:

Ատանայի թաղական խորհրդի անդամներէն Պատրիկեանները փափաք ունին Ատանայի մէջ որբանոց մը հաստատել գոնէ 20 որբ պահելու համար: Մասամբ իրենց յանձն առած են հոգալու, մնացածն ալ հանգանակութեամբ պիտի հայթայթեն:

ԲԱՊԱԲԱՊԱԳ

Խաղաղութեան վեհաժողովը

Խաղաղութեան վեհաժողովը աւարտուելու վրայ է: Կերեկ թէ բաւական գործնական քայլեր առնուած են առաջադրուած նպատակներու մասին Միտար Ըսթէտ Րիվիւ Օվ Րիվիզի խմբագիրը Հայ գոհ է ժողովի ունեցած արդիւնքէն: Մեր յաջորդ թելով ընդարձակ տեսութիւն մը պիտի ընենք Համաժողովին վերջին և վերջնակապան աշխատութեանց և որոշումներու մասին:

Այսպէս վրայով Անգլիոյ և Մ. Նահանգաց մէջ ծագած դժուարութիւնները, այս օրուան լուրերուն նայելով, պէտք է վերջացած համարել: Թրանսվալի վրայ պատերազմ ըլլալուն վախերը երթալով կ'աւելնան:

Սուլթանը սկսած է վախնալ սոսկալի կերպով այն կասկածը իր մէջ ունենալ թէ, իր թիկնապահներէն ոմանց մէջ մտադրութիւն կայ որ զինքը առեւազեն:

Երեկ Սուլթանը Սէլամագէն վերադարձին խիտտ Հայ վարացաւ, զինուոր մը իր կողքէն առաջ անցնելով աղերսագիր մը նետեց անոր կողքէն մէջ: Չինուոր անմիջապէս զինամիտք ըրին և քաջալիով տարին պահականոցը:

ԵՄԷՆԻ ԱՊՏԱՍՏՐՈՒԹԻՒՆԸ

Յուլիոս 3.— Եմէճէնի մէջ, Սէնաարի և Հոտէտայի մէջ տեղը գտնուող երկիրը թէ և հպատակած կը ցըցուէր, ոտկայն վերջին տեղեկութիւններէն կը անսնուի թէ Լիպետէն որ Հոտէտայի մօտ Գայմագամութիւն մը է, հարկահանները վանտուած ու երեք ոստիկաններ սպաննուած են, ուր Ապտուլլահը զօրք ղրկած է: Չէյտի իմամը որ անցեալ ամսոյն Ապտուլլահի արշաւանքը ետ մղեց, Սանաարի և Հոտէտայի գծին հիւսիսակողմը եղող երկիրը գրաւած ու իրեն բանակատեղի բրած է Սատեհ:

Յուլիոս 5. Կ. պոլսէն Լոնտոն թայմսին կը հեռագրուի:

Կայսերական թիկնապահութեան պաշտօնեայն թէ՛ Ֆիզ պէյ Սուլթանին տեղակալներ մը ներկայացուցեր է որ կը ցուցանէ թէ պահակազօրք առ հասարակ խիտ պարտազանց կը գնտուի ասոր վրայ Սուլթանը սաստիկ զայրացեր ու հրամայեր է որ հետազննեն քննութիւն մը կատարուի, և արդէն քննութիւնը սկսած է:

Յուլիոս 8 Կայսերական պահակապետ զօրաց մասին եղած քննութիւնները վերջացած են, տեսնուած է որ պահակազօրաց թիկէն մէկ երրորդ պակսեցուցած է: Կեղծ ստորագրութիւններով ամբողջական վճարումներ գանձուած և Հայ մը ուրիշ զեղծութեան տեղի ունեցած են: Թե՛ Ֆիզ պէյի համար պատուաշաններ կը ըստպատուին:

Յուլիոս 11.— Սուլթանը յանձնախուսմը մը սրողերէ որ քննէ թէ վերջերս իրարու ետեւէ տեղի ունեցող բազմաթիւ հրեհներուն պատճառը ի՞նչ է: Կ. Պոլսոյ մէջ ցարդ 100 էն աւելի հրեհներ ծագած են:

Դուրք կաշխատի ջնջել լուցիկի այն մենաշնորհը որ իրատէսով մը Սուլթանը վերջերս իւր փեսային նուրէտտին փաշային տուած էր:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ամերիկայի մէջ այս օրերս Հայ մը գործադուրներ կը յաջորդեն մէկը միւսին ետեւէն: Պրուքլինի, Նիւ Եորքի և Բիւլիվէյնի մէջ փողոցի ելքետրական կառքերու վարիչները գործադուր ըրած են. նոյնպէս գործադուր ըրած են Նիւ Եորքի Մէյքս Կոյեթի թերթ ծախող տղայքը:

Այս ամենուն մէջ ահաւոր է Բիւլիվէյնի գործադուրը. հոն զօրաց և գործադուր ընող քաղաքացիներուն մէջ ճակատ առ ճակատ կ'ուրենք երկ կուսնեան, զինուորները սուրիններով կը հարձակուին գործադուր ընողները. վերջիններս ամենայն ծայրայեղ միջոցներու կը դիմեն. կառքերուն տակ ու ժանակ կը դնեն և օդը կը հանեն մէջը գտնուած ժողովրդով միասին. ամենակատաղի կերպով կուրենք կը նեն հոս ու հոն. կտուր թէ քաղաքը բողոքովին անիշխանութեան մատնուած է:

Անգլիան Գրիպսի ԲԱՒԳԻՐԻՔ

«Մենտոր Անգլիարէն Լեզուի» գրպանի համար շինուած անգլիարէնէն հայերէն և հայերէնէն անգլիարէն բառգիրքը որ կէս տօարի կը ծախսուէր այժմ խմբագրութեան քով կը վաճառուի Հասար 25 սէնթի:

Իշխան Գուրտոն Լուսինեանի բառգրքէն քաղուած բառական Հայ գործածական խօսակցութեան ոճեր և բառեր կը պարունակէ: